



Մաս 150 Օդանավակայանի Աղմուկի Համատեղելիության Պլանավորման Ուսումնասիրություն

Նախագծի նախապատմություն

Բըրբենք-Գլենդեյլ-Պասադենա Օդանավակայանի Ղեկավարությունը (Burbank-Glendale-Pasadena Airport Authority) (Ղեկավարություն) թարմացնում է Հոլիվուդի Բերբենք Օդանավակայանի (BUR կամ Օդանավակայան) Աղմուկի Համատեղելիության Ուսումնասիրությունը (Ուսումնասիրություն կամ Մաս 150-ի Ուսումնասիրություն)՝ Դաշնային Ավիացիայի Վարչության (Federal Aviation Administration's (FAA's)) գործընթացի համաձայն, որը նկարագրված է Դաշնային Կանոնակարգերի Օրենսգրքի (Code of Federal Regulations), Հոդված 14-ի Մաս 150-ում (Մաս 150): Մաս 150-ի Ուսումնասիրությունը կամավոր, դաշնային միջոցներով ֆինանսավորվող և վերահսկվող պաշտոնական գործընթաց է օդանավակայանի օպերատորների համար՝ հասցեավորելու հողատարածքների օգտագործումը օդանավերի ազդեցության համատեղությամբ: Մաս 150-ի Ուսումնասիրությունը ներառում է հետևյալ երկու սկզբունքային տարրերը՝

- ▶ Աղմուկի Աղդեցության Քարտեզի (Noise Exposure Map (NEM)) տարրը նկարագրում է օդանավակայանի դասավորությունը և շահագործումը, օդանավերի հետ կապված աղմուկի ազդեցությունը, հողատարածքների օգտագործումը օդանավակայանի շրջակայքում, և արդյունքում առաջացող աղմուկի/հողատարածքների օգտագործման համատեղելիությունը: Մաս 150-ը պահանջում է, որպեսզի փաստաթղթերը հասցեավորեն օդանավի շահագործումը երկու ժամանակահատվածի ընթացքում՝ ներկայացման տարին և կանխատեսման տարին՝ ներկայացման տարվան հաջորդող առնվազն հինգ տարի անց:
- ▶ Աղմուկի Համատեղելիության Ծրագրի (Noise Compatibility Program (NCP)) տարրը նկարագրում է այն գործողությունները, որոնք օդանավակայանի օպերատորը խորհուրդ է տալիս անհամատեղելի հողատարածքների օգտագործման գոյություն ունեցող և ապագա խնդիրները հասցեավորելու համար:

Մաս 150-ի Ուսումնասիրությունը՝


- ▶ Բնորոշում է Օդանավակայանի շրջակայքում ներկայիս և կանխատեսվող տարեկան աղմուկի ազդեցությունը՝ հողատարածքների օգտագործումը օդանավակայանի շրջակայքում, Համայնքային Աղմուկի Համարժեք Մակարդակը (Community Noise Equivalent Level (CNEL)) սահմանող աղմուկի չափման միավորի միջոցով:
- ▶ Բացահայտում է օդանավակայանի շրջակայքում հողատարածքների օգտագործումը բարելավելու միջոցառումները:
- ▶ Ստեղծում է Օդանավակայանի NCP-ի կիրառման, գնահատման և նորացման մեթոդները ըստ անհրաժեշտության:

Մաս 150-ի Ուսումնասիրությունը՝

- ▶ Չի գնահատում այլ մոտակա տարածքում գտնվող օդանավակայանների օդանավերի շահագործումը:
- ▶ Չի դիտարկում օդանավերի շահագործումից բխող այլ ազդեցությունները (օդի որակ, պատահարներ և այլն):
- ▶ Չի կիրառում աղմուկի չափման այլ միավորներ, քան CNEL-ը, աղմուկի աղդեցությունները գնահատելու համար:

Մաս 150-ի Ուսումնասիրության համար նախատեսված են 4 բաց դռների օրերի քննարկումներ և մեկ հանրային լսում 2024-2026թթ-ի ընթացքում: Վստահ եղեք, որ գրանցվել եք մեր նախագծի կայքէջին՝ վերջին թարմացումները ստանալու համար:

Ուսումնասիրության Ժամանակացույցը



Ներառված լինել

Մաս 150-ի Ուսումնասիրությունը միտված է ակտիվ, երկկողմանի հաղորդակցությանը՝ ուսումնասիրության ողջ գործընթացի ժամանակահատվածում: Լրացուցիչ տեղեկատվության և ուսումնասիրության վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու համար այցելեք մեր կայքէջը: